

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

**(Գիտական հոդվածների ժողովածու)**

**VII**

***Նվիրվում է ականավոր արևելագետ  
Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին***

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2012**

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY

**ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ**

(сборник научных статей)

VII

*Посвящается 125-летию выдающегося востоковеда  
Овсеп Орбели*

**THE PROBLEMS OF ORIENTAL STUDIES**

VII

*Dedicated to the 125<sup>th</sup> anniversary of the birth of the  
outstanding orientalist Hovsep Orbeli*

Ереван  
Издательство ЕГУ  
2012

YEREVAN  
YSU PUBLISHING HOUSE  
2012

ՀՏԴ 93/99 : 32.001 : 801  
ԳՄԴ 63.3 + 66.01 + 81  
Ա 862

Հրատարակվում է Երևանի  
պետական համալսարանի  
գիտական խորհրդի որոշմամբ

**Ժողովածուն փայագրվում է Մարդկային ռեսուրսների  
զարգացման «Փյունիկ» համահայկական հիմնադրամի  
աջակցությամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելիքյան Գուրգեն - ր. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*)  
Ասատրյան Գառնիկ - ր. գ. ղ., պրոֆեսոր  
Խաչիկյան Մարգարիտա - ր. գ. ղ., պրոֆեսոր  
Խառատյան Ալբերտ - պ. գ. ղ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ  
Կարաբեկյան Սամվել - ր. գ. թ., դոցենտ  
Հովհաննիսյան Լավրենտի - ր. գ. ղ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ  
Մելքոնյան Ռուբեն - ր. գ. թ., դոցենտ (*հատորի պատասխանատու*)  
Ոսկանյան Վարդան - ր. գ. թ., դոցենտ  
Սարգսյան Լևոն - պ. գ. ղ., պրոֆեսոր  
Սաֆարյան Ալեքսանդր - պ. գ. թ., պրոֆեսոր  
Սաֆրաստյան Ռուբեն - պ. գ. ղ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ  
Տոնիկյան Սոնա - ր. գ. թ., դոցենտ

Արևելագիտության հարցեր: Գիտական հոդվածների  
Ա 862 ժողովածու/ ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ: Խմբ.  
Խորհուրդ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, Հատոր VII. – 528 էջ:

Ժողովածուի VII հատորում ներկայացված են արևելագիտության  
տարբեր բնագավառներին նվիրված հոդվածներ: Նախատեսված է  
արևելագետների, պատմաբանների, քաղաքագետների, բանա-  
սերների, լրագրողների և ընթերցող լայն զանգվածների համար:

ՀՏԴ 93/99 : 32.001 : 801  
ԳՄԴ 63.3 + 66.01 + 81

ISBN 978-5-8084-1679-6

© ԵՊՀ հրատ., 2012  
© Հեղ. խումբ, 2012

**Գորգեն Մելիքյան**  
**բ.գ.թ., պրոֆեսոր**  
**Ալեքսանդր Սաֆարյան**  
**պ.գ.թ., պրոֆեսոր**

## **ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԳՈՐԴԼԵՎՍԿԻՆ՝ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ռուսական ու խորհրդային արևելագիտության ամենանշանավոր դեմքերից մեկը՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին (1876-1956թթ.), ում թե՛ իր, թե՛ մեր ժամանակակից առաջատար արևելագետներն արդարացիորեն անվանում են «օսմանագետ-թուրքագետների մոսկովյան դպրոցի հիմնադիր»<sup>1</sup>, տարբեր տարիների հրապարակումներում լայնորեն անդրադարձել է թուրքագիտության և հայագիտության հատման ահռելի տիրույթի տարաբնույթ հիմնահարցերին:

Վլադիմիր Գորդլևսկին 1899թ. ավարտել է Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը<sup>2</sup>, 1904թ.՝ նաև Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Երկար տարիներ (1907-1948թթ.) նա թուրքերեն ու թուրք գրականության պատմություն է դասավանդել Լազար-

<sup>1</sup> St' u Орешкова С. Ф., Некоторые размышления о развитии тюркологии и османистики. - Turcica et Ottomanica: Сборник статей в честь 70-летия М. С. Мейера, Москва, 2006, стр. 27:

<sup>2</sup> Հայկական աղբյուրներում ավանդաբար կոչվել է «Մոսկվայի Լազարյան ճեմարան»: Սանրամասն տե՛ս Իգնատյան Ա. Հ., Լազարյան ճեմարան, Երևան, 1969, Բազիյանց Ա. Պ., Էջեր Լազարյանների դիվանից (ակնարկներ), թարգմ.՝ Դիլոյան Վ. Ա., խմբ.՝ Մարտիրոսյան Հ. Հ., Երևան, 1986, էջ 34-87, Սաֆարյան Ա., Հայ գրահրատարակչական գործը Մոսկվայի Լազարյան ճեմարանում, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1988, N 3 (122), էջ 224-229, Меликян Г. В., Хромов А. Л., История преподавания персидского языка в Лазаревском институте восточных языков, «Вестник ЕГУ», N1 1989 г., стр. 188-197:

յան ինստիտուտում, որը հետագայում վերակազմավորվել է նախ որպես Հայկական ինստիտուտ (1919թ.), այնուհետև որպես Առաջավորասիական ինստիտուտ, ապա՝ Կենդանի արևելյան լեզուների կենտրոնական ինստիտուտ (1920թ.) և, վերջապես, Մոսկվայի արևելյան լեզուների ինստիտուտ: Վ. Ա. Գորդլևսկին ղեկավարել է նաև նախկին ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Մերձավոր Արևելքի երկրների լեզվի ու գրականության սեկտորը<sup>3</sup>: Ի մի բերելով ճանաչված արևելագետի կյանքի օրոք հրատարակված ու նաև անտիպ, բայց բացառիկ հետաքրքրություն ներկայացնող ուսումնասիրությունները, նախկին ԽՍՀՄ ԳԱ կողմից ստեղծված խմբագրական հանձնախումբը 1960-ական թթ. հրատարակել է Վ. Գորդլևսկու «Ընտիր երկերը»՝ չորս ծավալուն հատորով<sup>4</sup>:

Հայ արևելագետներին համար այսօր էլ, կարծում ենք, կարող է բացառիկ հետաքրքրություն ներկայացնել թուրքագետ և օսմանագետ Վ. Ա. Գորդլևսկու՝ հայագիտական պրոբլեմատիկային նվիրված անդրադարձների ողջ համալիրը, մասնավորապես Օսմանյան կայսրության ազգային ու կրոնական փոքրամասնությունների հիմնահարցերի մասին հրապարակումներն ու գրառումները, որոնք, հիրավի, ուրույն բացահայտումների ու մտորումների նյութ են պարունակում արևելագիտության պատմության հետագա ուսումնասիրողների համար<sup>5</sup>: Միաժամանակ, ինչպես արդեն առիթ

<sup>3</sup> Վլադիմիր Գորդլևսկու կյանքի ու գործունեության մասին մանրամասն տե՛ս Բертельс Е. Э., В. А. Гордлевский, в кн. - Академику В. А. Гордлевскому к его 75-летию, Москва, 1953, его же, В. А. Гордлевский, - "Краткие сообщения Института востоковедения", Москва, 1956, № 22:

<sup>4</sup> St' u Гордлевский В. А., Избранные сочинения, т. I (Исторические работы), Москва, 1960, т. II (Язык и литература), Москва, 1961, т. III (История и культура), Москва, 1962, т. IV (Этнография, история востоковедения, рецензии), Москва, 1968.

<sup>5</sup> St' u նաև Սաֆարյան Ալ., Մելքոնյան Ռ., Ակադեմիկոս Վ. Գորդլևսկին՝ Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացման մասին, «Թուրքագի-

ունեցել ենք նշել<sup>6</sup>, ակնհայտ է, որ Վլադիմիր Գորդլևսկու մի շարք գնահատականներ բացարձակապես ընդունելի չեն, քանզի պարտադրված են եղել նախ ցարիզմի արտաքին քաղաքականության հրամայականներով<sup>7</sup>, իսկ այնուհետև՝ ստալինյան բռնատիրության դարաշրջանի կաղապարներով: Օրինակ, հիշելով թուրք գրող, լրագրող ու պատմաբան Ահմեթ Ռեֆիք Ալթընայի (1880-1937թթ.) «Երկու կոմիտե-երկու կոտորած» (“İki komite-iki katil”) գրքույկի մասին, Վ. Ա. Գորդլևսկին գրել է, որ նրանում հեղինակը «խիստ դատապարտել է իմպերիալիստական պատերազմի ժամանակ հայ ժողովրդի ճակատագրի հետ անխղճաբար խաղացող երիտթուրքերի ու դաշակների քաղաքականությունը»<sup>8</sup>: Ակնհայտ է, որ Վ. Ա. Գորդլևսկու վերոհիշյալ հրապարակման մեջ, ինչպես նաև տասնամյակներ շարունակ խորհրդային (ըստ էության՝ պրոթուրքական ուներանսներ ենթադրող և անպայման ընդգծված հակադաշնակցական ուղղվածությամբ) պատմաբանների հեղինակած բազմաթիվ մենագրություններում, դասագրքերում ու բնականաբար նաև հանրագիտարա-

տական և օսմանագիտական հետազոտություններ» (խմբ.՝ Ռ. Ա. Մաֆրաստյան), հ. VI, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2009, էջ 298-304: Վ. Ա. Գորդլևսկու՝ հայկական կոտորածների մասին 1917 թ. գրած «Հայերը և պատերազմը» հոդվածը տե՛ս Գордлевский В. А., Избранные сочинения, т. III, стр.128-130, ինչպես նաև Геноцид армян в Османской империи, Сборник документов и материалов (под редакцией проф. М. Г. Нерсисяна), Издательство АН Армянской ССР, Ереван, 1966, стр. 450-451, 516:

<sup>6</sup> Մասնավորապես տե՛ս Մաֆրաստյան Ալ., Զիյա Գյոքալփը և «Թուրքակալության հիմունքները» (Պատ. խմբ.՝ Ա. Հ. Միմոնյան, Ռ. Ա. Մաֆրաստյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 19-20, 24-25:

<sup>7</sup> Տարակուսանք է հարուցում մասնավորապես Վ. Գորդլևսկու՝ հետևյալ գրքի մասին միանշանակ բացասական գրախոսականը. Dr. V. Totomjanz und E. Toptschian. Die social – ökonomische Türkei, Berlin, 1901, (124 էջ), Տե՛ս Գордлевский В. А., Собрание сочинений, т. IV, стр 506-507: Հատկանշական է, որ հիշյալ գրախոսականի ծայրահեղ քննադատական դրույթները հետագայում բազմիցս հերքվել են հենց գրախոսի կողմից:

<sup>8</sup> Гордлевский В. А., Собрание сочинений, т. IV, стр 463:

նային հոդվածներում արտացոլվել են թուրք պատմագրության ու հրապարակախոսության մեջ համառոտ հետևողականությամբ շեփոթվող «հայ կոմիտեականների գործունեության», «փոխադարձ ջարդերի», Հայաստանի առաջին Հանրապետության իշխանությունների և Հայ Հեղափոխական Դաշնակցության՝ «իմպերիալիստական ուժերի հետ համագործակցության» կամ «ավանտյուրիստական քաղաքականության» մասին միանգամայն սին, բայց խիստ վտանգավոր պնդումները, որոնք հեռահար կերպով նպատակաուղղվել են հանցագործություն կատարողի և գոհի միջև հավասարության նշան դնելուն և այդպիսով Հայոց ցեղասպանության ժխտողականությանը սատարելուն: Հարկ է նշել նաև, որ նմանատիպ ու շատ ավելի գոեհիկ պնդումները և որակումները, փաստորեն, գերիշխող են եղել նաև ստալինյան շրջանի խորհրդահայ պատմագրության մեջ<sup>9</sup>:

Դեռևս խորհրդային տարիներին, ճեղքելով պանթյուրքիզմի նկատմամբ միանշանակ մերժողական, իսկ թուրքիզմի նկատմամբ «ներողամիտ» խորհրդային պատմագրության ամբողջատիրական կաղապարները, Հր. Ռ. Միմոնյանը գրել է. «Թուրքիզմն ուղղված չէր ո՛չ Եվրոպայի, և ո՛չ էլ Ռուսաստանի դեմ... Թուրքիզմը մահացու էր քրիստոնյա հայության համար, քանզի թուրքիզմի իդեալը լիակատար թուրքացումն էր Անատոլիայի, որի մեջ «Արևելյան Անատոլիա» անվան տակ մտցված էր նաև Արևմտյան Հայաստանը:

Պանթյուրքիզմը երկու սուր ծայր ուներ: Դրանցից առաջինն ուղղված էր Ռուսաստանի դեմ, որի կազմում էր թուր-

<sup>9</sup> Մանրամասն տե՛ս Մարուխանյան Ն., Մեծ եղեռնի լուսաբանումը խորհրդահայ պատմագրության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, թիվ 2, էջ 42, Մարիկյան Ս., Հայ գաղափարաբանություն (Պատմաբանական տեսություն), Երևան, 1998, էջ 121, Զոհրաբյան Է. Դ., Հայոց ցեղասպանության հիմնահարցը խորհրդահայ պատմագրության մեջ,- Հայոց Մեծ եղեռն 90, հոդվածների ժողովածու (Պատ. խմբ.՝ Ա. Հ. Միմոնյան), Երևան, 2005, էջ 102-105:

քալեզու ժողովուրդների բացարձակ մեծամասնությունը: Մյուս սուր ծայրով այն ուղղվեց թուրանական «միասնական ժողովրդի» մեջ ընկած հայ ժողովրդի՝ իբրև խոչընդոտի դեմ՝ ինչպես բուն Թուրքիայում, այնպես էլ Կովկասում»<sup>10</sup>:

Միաժամանակ ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանն իրավացիորեն ընդգծում էր խորհրդային որոշ պատմաբանների աշխատություններում արհեստականորեն սքողվող այն, թվում է, անվիճելի իրողությունը, որ «թուրքիզմը, կազմելով պանթուրքիզմի միջուկը, վերջին հաշվով սրա հետ մի ամբողջություն է կազմում: Պանթուրքիզմը բարձրանում է թուրքիզմի ուսերին կամ, կարելի է ասել՝ վերջինս վերածվում է պանթուրքիզմի: Եթե թուրքիզմն Օսմանյան կայսրությունը, հատկապես «բուն Թուրքիան» ազգային տեսակետից «միատարր» դարձնելու ծրագիր էր, ապա պանթուրքիզմը գերաճում է թուրքիզմից, ընդլայնում գործունեության դաշտը, տարածվում Թուրքիայի սահմաններից դուրս՝ իր ոլորտի մեջ առնելով ուրիշ երկրներ ու ժողովուրդներ»<sup>11</sup>:

Իհարկե, նույնիսկ խորհրդա-թուրքական հարաբերությունների պարտադրանքով կաղապարված և թուրքիզմի նկատմամբ ավանդաբար «ներողամիտ» վերաբերմունք դրսևորող նախկին Խորհրդային Միության հետազոտողների աշխատություններում չէր կարող չարձանագրվել նախ Օսմանյան կայսրությունում, այնուհետև Թուրքիայի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների՝ պետականորեն իրագործված ունեզրկման (ըստ էության՝ պետական քաղաքականություն դարձած բացեիբաց թալանի), առևտրի և արդյունաբերության ոլորտներում թուրք ազգային ձեռներեցության՝ օտարերկրացիներին և հատկապես ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին պատկանող սեփա-

<sup>10</sup> Միմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 287:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 243:

կանության վրա «նախապես հենվելու»<sup>12</sup> անվիճելի իրողությունը: «Դասակարգային մոտեցում» դրսևորող ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին ևս, անդրադառնալով «Թուրքական օջախ» ազգայնամուլական կազմակերպության գործունեությանը, փաստում էր, որ այն «բարձրացնում է նաև տնտեսական հարց. ազատագրել երկիրը օտարերկրյա շահագործումից և ատեղծել ազգային կապիտալիզմ՝ նաև տեղական քրիստոնեական (հայկական-հունական) բուրժուական խավի ոչնչացման ճանապարհով»<sup>13</sup> (ընդգծումը մերն է- Գ.Մ., Ա. Ս.):

Հայաստանյան ընթերցողին վաղուց ծանոթ է Վ. Ա. Գորդլևսկու «Հայերը և պատերազմը» հոդվածը<sup>14</sup>, որտեղ հեղինա-

<sup>12</sup> Մանրամասն տե՛ս Երեմեև Դ. Ե., На стыке Азии и Европы (очерки о Турции и турках), Москва, 1980, стр. 124, Киреев К. Г., История этатизма в Турции, Москва, 1991, стр. 154, տե՛ս և հմմտ. նաև Հովհաննիսյան Ա., Ցեղասպանության ծխտուրը և էթիկան (թուրքական ազգային պետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո), Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ (խմբ. Ռ. Սաֆրաստյանի), IV, Երևան, 2006, էջ 124-129, Nevzat O., Emvâl-i Metrûke Olayı, Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, Belge Yayınları: 634 (Türkiye İncelemeleri Dizisi), İstanbul, 2010, Мелконян Р. О., Погосян Н. А., О некоторых особенностях налоговой политики Турции по отношению к национальным меньшинствам, «Alma mater» Вестник высшей школы, N 7, Москва, 2012, стр. 73-77:

<sup>13</sup> Гордлевский В. А., Идеология Новой Турции- Избранные сочинения, т. III (История и культура), Москва, 1962, стр. 500, տե՛ս և հմմտ. նաև Սաֆրաստյան Ա., «Տնտեսական թուրքականությունը», Էտատիզմի քաղաքականությունը Թուրքիայում և տնտեսության «թուրքացումը» (Պատ. խմբ.՝ Ա. Հ. Միմոնյան, Ռ. Ա. Սաֆրաստյան), Երևան, 2012, էջ 21-38:

<sup>14</sup> Հոդվածը «Թուրքիայի հայերի կյանքից» («Из жизни армян в Турции») վերնագրով առաջին անգամ տպագրվել է «Русские ведомости» (Մ., 1917, N 133), հեղինակի կողմից վերամշակվել ու վերահրատարակվել է Գորդլևսկիի В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 128-130: Հիշյալ հոդվածից մի ծավալուն հատված գետեղվել է ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի աշխատասիրությամբ հրատարակված «Հայերի գեղնցիկը Օսմանյան կայսրության մեջ» հիմնարար ժողովածուի մեջ: Տե՛ս

կը մասնավորապես վկայել է. «Դարերով թուրքահայերի վրա էր ծանրացել ստրկության և քուրդ կալվածատեր-հողատերերից ճորտական կախվածության լուծը: Դարերով հայերը տառապում էին թուրքական իշխանությունների ծաղրուծանակից ու կամայականությունից: /Մեկ անգամ չէ, որ հողը կարմիր էր ներկվել հայերի արյամբ, սակայն պատերազմը վիթխարի թափ հաղորդեց կոտորածին, ասես մարդու վրայից սրբվել էր զսպածակույթը և, արհամարհելով աստվածային ու մարդկային օրենքները, մարդն ազատ էր արձակել իր հոգու խորքում թաքնված գազանին: Կրքերը սանձազերծվել էին ամբողջ թափով: /Կոտորածի ժամանակ թուրքերից ետ չէր մնում նաև նրանց քաղաքական բարեկամը՝ գերմանական իմպերիալիզմը: Օրինակ, Մուշում, որբանցի գերմանուհի տնօրենուհին, իշխանություններին էր հանձնում հայերին, որոնք պարզամտորեն նրանից, իբրև քրիստոնյայից, պաշտպանություն էին հայցում: /Տարակուսում եմ՝ տակտիկական հնարք էր դա, թե գուցե անկեղծ համոզմունք, սակայն Բիթլիսի թուրք բնակչությունը կոտորածների համար մեղադրում էր Գերմանիային. իբր նա է հրահրել կառավարությանը: Գերմանիան իբր իմացել է, որ Թուրքիա ուղարկված զենքը հայերը Ռուսաստան են փոխադրում և պահանջել է, որպեսզի կառավարությունը պատժի հայերին: / Այս բառերից զգացվում է կարծես թե ոչ իմաստազուրկ այն բացատրությունը, թե հայերը պատիժ են կրում Ռուսաստանի հանդեպ ունեցած համակրանքի պատճառով: Ղա սպանդանոց էր, ժողովրդի անօրինակ բնաջնջում (ընդգծումը մերն է - Գ.Մ., Ա.Ս.) ... Կոտորածը՝ կոտորած, պատերազմը՝ պատերազմ, և հայերին վերցնում են զինվորական ծառայության, բայց, ինչպես հայտնի է, առաջավոր դիրքեր չեն ուղարկում, այլ թողնում են թիկունքում աշխատելու: Երբեմն հայեր են հան-

Геноцид армян в Османской империи (сборник документов и материалов под ред. проф. М. Г. Нерсисяна), Ереван, 1966, стр. 450-451:

դիպում նաև զորամասերում: Մի անգամ մեր կողմը մի հայ էր փախել, որը պատերազմից առաջ ապրում էր Ռուսաստանում: Նա պատմում էր, որ հայերն իրենց կյանքը փրկելու նպատակով երբեմն զորակոչվելիս իսլամ էին ընդունում կամ, ավելի ճիշտ, բռնությամբ մահմեդականացվում էին: Երբ անվանակոչի ժամանակ այդպիսի մի նորահավատ մահմեդական քրիստոնեական անունն է ասում, ապա անհապաղ գնդակահարվում է ... /Եվ այսպես անվերջ ու անվերջ գազանություն, կոտորած, հարստահարում, գնդակահարություն: Թուրքիայում ապրող հայերի միայն ոչ մի մեծ հատվածի է հաջողվում փրկվել...»<sup>15</sup>:

\*\*\*

1930թ. առաջին անգամ հրատարակվել է Վլադիմիր Գորդլևսկու «Օսմաներեն «ուզան» բառի ծագումը» հոդվածը<sup>16</sup>, որը հեղինակային հետազոտության լրացումներով ու խմբագրական ուշագրավ ծանոթագրություններով վերահրատարակվել է ականավոր արևելագետի «Ընտիր երկերում»<sup>17</sup>: Հիշյալ հոդվածում հեղինակը բանավիճում է թուրքական, թերևս, ամենանշանավոր օսմանագետի՝ Մեհմեդ Ֆուադ Բյուրյուլյուի<sup>18</sup> հետ՝ վերջինիս մի էտյուդի<sup>19</sup> առիթով (հիշարժան է

<sup>15</sup> Վլադիմիր Գորդլևսկի, Հայերը և պատերազմը, - Մև գիրք: Նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիների և Հայոց ցեղասպանության մասին (Գիրքը հրատարակության է պատրաստել Ալբերտ Իսոյանը, խմբ.՝ Պետրոս Հովհաննիսյան), Երևան, 2011, էջ 519-521:

<sup>16</sup> Տե՛ս «Ученые записки Института народов Востока», т. 1, Москва, 1930, стр. 229-331:

<sup>17</sup> Տե՛ս Гордлевский В. А., Избранные сочинения, т. III (История и культура), Москва, 1962, стр. 264-265:

<sup>18</sup> Köprülü Mehmet Fuat, 1890-1966, - գրող, գրականագետ, պատմաբան ու քաղաքական գործիչ: Եղել է Ստամբուլի համալսարանի գրականության ֆակուլտետի պրոֆեսոր (1913-1943) և ղեկան: Ընտրվել է ԹԱՄԺ-ի պատգամավոր, Դեմոկրատական կուսակցության իշխանության տարիներին դարձել է Թուրքիայի Հանրապետության արտգործնախարար (1950-

նան, որ այդ էտյուդը տպագրվել էր որպես Արշակ Չոպանյանի՝ դեռևս անցյալ դարասկզբին տպագրված գրքին<sup>20</sup> յուրօրինակ մի արձագանք):

Վ. Ա. Գորդլևսկու կողմից որպես «միտումնավոր, բայց փաստական նյութով հարուստ» հրապարակում<sup>21</sup> բնութագրված իր վերոհիշյալ էտյուդում Մեհմեդ Ֆուադ Քյոփրյուլյուն փորձել էր ապացուցել, որ հայերը ժողովրդական երգիչ-աշուղների ինստիտուտը փոխառել են թուրքերից: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշում է Վլադիմիր Գորդլևսկին, «Հա-

1957թթ.): Թյուրքականության նշանավոր գաղափարախոս Ջիյա Գյոքալփը իր «Թյուրքականության հիմունքները» գրքում Մեհմեդ Ֆուադ Քյոփրյուլյուի անվան հետ է կապում բուն թուրքիայում ակադեմիական թուրքագիտության կայացման և եվրոպական ճանաչում ստանալու ֆենոմենը: Տե՛ս Gökalp Z., Türkçülüğün Esasları, Dördüncü basılış, İstanbul, 1961, s. 11: Հունգարական խիստ թուրքամետ արևելագետ, պրոֆ. Լ. Ռաշոնյին հենց Մեհմեդ Ֆուադ Քյոփրյուլյուին է անվանում «թուրքական անցյալի ամենահիմնարար հետազոտող»: Տե՛ս Prof. Dr. La szló Ra sonyi, Tarihte Türklük, Üçüncü Baskı, Ankara, 1993, s. 259: Տե՛ս և նման. նաև Մաֆարյան Ալ., Ջիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», էջ 12-16, 142, 148: Մեհմեդ Ֆուադ Քյոփրյուլյուին՝ Վ. Ա. Գորդլևսկու այլ անդրադարձներից տե՛ս Переходная пора Османской Литературы (По поводу книги Кёпрюлюзаде Мехмеда Фуада).- «Известия Общества обследования и изучения Азербайджана», Баку, 1926, № 2, стр. 10-31, արտատպված է նաև Гордлевский В. А., Избранные сочинения, т. II (Язык и литература), стр. 444-462:

<sup>19</sup> Մեհմեդ Ֆուադ Քյոփրյուլյուի հիշյալ «էտյուդը» հետազոտյում լատինատառ վերահրատարակվել է՝ ընդգրկվելով հեղինակի գրականագիտական ուսումնասիրություններն ամփոփող հետևյալ գրքում. Prof. Dr. Fuad Köprülü, Edebiyat Araştırmaları (Türk Tarih Kurumu Yayınlarından VII. Seri – Sayı: 47, Makaleler Külliyyatı – I), Ankara, 1966, s. 239-269: Տե՛ս և նման. նաև նույն գրքում զետեղված “Ozan” հրապարակումը (էջ 131-144):

<sup>20</sup> Տե՛ս Tschobanian A., Les trouvères arméniens, Paris, 1906:

<sup>21</sup> Տե՛ս Гордлевский В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 264: Տե՛ս և նման. նաև Մեհմեդ Ֆուադ Քյոփրյուլյուի աշխատանքների մասին ուսաստանյան երեք արևելագետ-ակադեմիկոսների հետևյալ հրապարակումը. Бартольд В., Ольденбург С., Крачковский И., Записка об ученых трудах Кёпрюлюзаде Фуад бей.- «Известия Российской Академии наук», т. XIX, сер. VI, Л., 1925, стр. 892-898:

յաստանի պատմությունից ոչ մեծ տեղեկանքը հանգեցնում է հակառակ եզրակացության<sup>22</sup>: Վերլուծելով փոքրասիական տարածքում հայերի ու թուրքերի դարավոր համակեցության և դրա հենքի վրա ձևավորված մշակութային փոխգործակցության հարցերը՝ ականավոր ռուս արևելագետը զարմանքով արձանագրել է, որ «Քյոփրյուլյուզադեն չի կասկածում, որ «ուզան» (وزن) գիտաբանը, որը թափանցել է նաև այսպես կոչված Իբն Բիբիի ժամանակագրությունը<sup>23</sup>, և Քորքուդ Դեդեի<sup>24</sup> մասին երգերը հենց խոսում է հայ երգիչների՝ մուսուլմանների շրջանում տարածված լինելու մասին»<sup>25</sup>: Միաժամանակ Վ. Գորդլևսկին փաստում է, որ Միջին Ասիայում ժո-

<sup>22</sup> Տե՛ս Гордлевский В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 264:

<sup>23</sup> Տե՛ս և նման. նաև Из комментариев к староосманскому переводу хроники малоазийских Сельджукидов, так называемой хроники Ибн Биби

<sup>24</sup> «Քորքուդ Մթա» կամ «Դեդե Քորքուդ» (Kitab-ı Dedem Korkut alâlisân-ı Taife-i Oğuzan) էպոսում պատմվում է ինչպես հույների, հայերի ու վրացիների, այնպես էլ գերբնական արարածների դեմ իսլամ ընդունած օղուզական ցեղերի վարած պատերազմների ու ներքին բախումների մասին: Թուրք գրականագետները կարևորում են Օրհան Շաիք Գյոքայի (1973) ու Մուհարրեմ Էրգինի (1958-1963) աշխատասիրությամբ հրատարակությունները: Տե՛ս նաև Pertev Naili Boratav, Halk Hikâyeleri ve Halk Hikâyeciliği, Ankara 1946, Dr. Ali Berat Alptekin, Dede Korkut Hikâyeleri ile Halk Hikâyelerinin Münâbetleri, Türk Kültürü Araştırmaları (Prof. Dr. Şükrü Elçin'e Armağan), Yıl XXIX-2-1991, Ankara, 1993, s. 22-23: Ռուս. Հրատ. տե՛ս Книга моего деда Коркута, Москва-Ленинград, 1962 (с критич. статьями В. В. Бартольда, А.Ю. Якубовского и В.М. Жирмунского): Հայաստանյան հեղինակների անդրադարձները տե՛ս Միրզոյան Հ. Ղ., Մեղենի գաղափարական ակունքները, «Էջմիածին», նոյեմբեր, 2010, էջ 124-134, նույնի էպոսը որպես տվյալ ժողովրդի ինքնության ուսումնասիրության աղբյուր (օղուզական էպոսի օրինակով), Հայոց ինքնության հարցեր /Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Ս. Ա. Ջաքարյան, - Երևան, 2012, էջ 22-35, ինչպես նաև Մաֆարյան Ալ., Ջիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», էջ 138:

<sup>25</sup> Տե՛ս Гордлевский В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 265:



դովրդական երգչի համար դազախների (ինչպես և ուզբեկների) մոտ բացակայում է «ուզան» եզրը, և այն, կարծես թե անհայտ է նաև փոքրասիական թուրքերի ամենամերձավոր ազգակիցներին՝ թուրքմեններին, այսպիսով «ուզան» գիտաբանի կիրառության տարածաշրջանը սահմանափակված է Փոքր Ասիայով<sup>26</sup>: Այնուհետև ռուսաստանյան գիտնականը կասկածի տակ է վերցնում Մեհմեդ Ֆուադ Բյուրյույունի՝ «ուզան» բառը յակուտերեն «ույուն», ավելի ճիշտ «ոյուն» բառին հանգեցնելու փորձը՝ պնդելով, որ ավելի բնական է ենթադրել, թե այստեղ արտացոլվել է Մովսես Խորենացու նկարագրած հին հայկական «գուսանը»<sup>27</sup>, քանզի գուսանները զարդարում էին դեռևս հայոց Արշակունի արքաների արքունիքը, իսկ հետագայում ծառայել են թե՛ սելջուկներին, թե՛ օսմանյան բեյերին Անատոլիայում<sup>28</sup>: Վ. Գորդլևսկին ապա առաջ է քաշում նաև այն միանգամայն հիմնավոր վարկածը, որ ուշադիր քննությունը կբացահայտի քրիստոնեական-փոքրասիական (հայկական) պոեզիայի ազդեցությունը Բյուրյույունի մասին երգերում<sup>29</sup>: Ճանաչված ռուս արևելագետը հաստատում էր, որ Հայաստանը (Անդրկովկասը) նաև XX դարի սկզբին էր ներկայանում որպես այնպիսի «աշուղների հոգևոր կենտրոն,

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>27</sup> Վ. Գորդլևսկու մեկ այլ հրապարակում վկայում է այն մասին, որ հեղինակը քաջածանոթ էր հատկապես Մովսես Խորենացու մասին Լազարյան ինստիտուտի պրոֆեսոր Գ. Ա. Խալաբյանցի ռուսամասիրություններին: Տե՛ս Գորդլևսկիի В. А., Московское востоковедение после Октября, - Избранные сочинения, т. IV, (Этнография, история востоковедения, рецензии), стр. 337:

<sup>28</sup> Տե՛ս Գորդլևսկիի В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 264:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում, տե՛ս և նման նաև Сафарян А. В., Согомонян А. С., Об эпосе "Героглы - Кер-оглы" и его армянских версиях, - Сюжет Героглы и литература Востока, (Материалы международной научной конференции), Дашогуз, 2009, стр. 360-361 (նույնը՝ թուրքմեններեն՝ էջ 135, անգլերեն՝ էջ 247-248):

ովքեր հավասարապես հեշտ երգեր էին հորինում ինչպես հայերեն, այնպես էլ օսմաներեն (իմա՝ թուրքերեն - Գ.Մ., Ա.Ս.), այսինքն թե՛ քրիստոնյաների, թե՛ մուսուլմանների համար»<sup>30</sup>: Ըստ Վ. Ա. Գորդլևսկու՝ «Գուսան»-«ուզան» բառը («պրոֆեսիոնալ երգիչ» իմաստով) հետագայում դուրս է մղվել հայերի և օսմանյան թուրքերի մոտ արաբերեն «عاشق» բառով՝ հայերենում վերածվելով «աշուղի», իսկ «ուզան» բառը, «դեզրադացվելով» նշանակում է միայն «շատախոս, դատարկախոս» (ռուս. բնագրում՝ «болтун») <sup>31</sup>:

\*\*\*

Լազարյան ճեմարանի ավանդույթների կրող Վ.Ա. Գորդլևսկուն, բնականաբար, քաջածանոթ էին հատկապես Ռու-

<sup>30</sup> Гордлевский В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 265:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում, նման նաև Радлов В. В., Опыт словаря тюркских наречий, т. 1, СПб., 1893, столб. 1761. Հատկանշական է, որ միայն իր հոդվածի տողատակում է Վ. Գորդլևսկին հավելում, թե ինքը Կոնիայում է լսել «օզան» ձևը, որն էլ հենց «գուսան, աշուղ», «ժողովրդական երգիչ» կամ «բանաստեղծ» իմաստներով գործածվում է ժամանակակից գրական թուրքերենում: Տե՛ս և նման. Гордлевский В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 265, Seyit Kemal Karaalioglu, Resimli Türk Edebiyatçılar Sözlüğü (Genişletilmiş İkinci Basım), İnkılâp ve Aka, İstanbul, 1982, s. 56, 629, Баскаков А. Н., Голубева Н. П., Кямилаева А. А., Любимов К. М., Салимзянова Ф. А., Юсипова Р. Р., Турецко-русский словарь, Москва, 1977, стр. 697: Տե՛ս և նման նաև Մալխասեանց Սո., Հայերեն բացատրական բառարան, Հատոր առաջին, Երևան, 1944, էջ 198 և 470, Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Ա հատոր, Երևան, 1971, էջ 597-598 («Գուսան» բառահոդվածը): Հիմնահարցին հայ հեղինակների հետագա անդրադարձները տե՛ս Ամիրյան Խ., Թուրքալեզու հայ աշուղներ և Մ. Ֆ. Քեռիբյույուն, «Մովետական գրականություն», 1976, N 73, Թուրքալեզու հայ աշուղներ (Օսմանյան կայսրություն, XVI-XX դարեր), կազմող՝ Խ. Պ. Ամիրյան, Փարիզ, 1993: (Հիշյալ գրքի մասին բանասիրության թեկնածու Վ. Ս. Մաղալյանի արժեքավոր գրախոսությունը տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», N 3(93), Երևան, 1997, էջ 193-199):

սաստանի կայսրությունում լույս տեսած հայագիտական հրատարակությունները: Դեռևս 1914թ. տպագրված իր հոդվածներից մեկում<sup>32</sup> հեղինակը հղում է կատարում «Էմինյան ազգագրական ժողովածուին» և արևմտահայ վաստակաշատ ազգագրագետ, բանահավաք ու հասարակական գործիչ Սարգիս Հայկունուն (Սարգիս Ղազարյանին, 1838-1908թթ.), ում աշխատանքները հայաստանյան իրականության մեջ համակողմանի ուսումնասիրվեցին և պատշաճ գնահատանքի արժանացան միայն տասնամյակներ անց՝ շնորհիվ բանասիրության դոկտոր Վերժինե Սվազյանի<sup>33</sup>:

Վ. Գորդլևսկին մշտապես հետաքրքրվում էր ռուսաստանցի հայ արևելագետների, մասնավորապես Հ. Ա. Օրբելու (1887-1961թթ.), աշխատանքներով: «Այնտեղ, ուր հնում ապրում էին հայերը» հոդվածում նա հիշում է, թե ինչպես առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ռուսական հնագիտական ընկերությունը արշավախումբ էր ուղարկել Վան, և Հովսեփ Օրբելուն բախտ էր վիճակվել պեղել (1916թ.) այն պատը, որի վրա ուրարտական Սարդուրի Բ թագավորի արձանագրությունն էր<sup>34</sup>: «Փոքր Ասիայի Սելջուկների պետությունը» կոթողային մենագրությունում հեղինակը պաշտպանում է սելջուկյան դարաշրջանի արվեստի վրա տեղական (հայկական ու կովկասյան) մշակութային ազդեցության մասին Հ. Ա. Օրբելու տեսակետը<sup>35</sup>:

<sup>32</sup> Из османской демонологии, - «Этнографическое обозрение», Москва, 1914, N1-2, стр. 1-45, արևատպված է նաև Գորդլևսկիի В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 299-325:

<sup>33</sup> Տե՛ս Սվազյան Վ. Գ., Սարգիս Հայկունի (կյանքն ու գործունեությունը), - Հայ ազգագրություն և բանահյուսություն (կյութեր և ուսումնասիրություններ), 4, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1973, էջ 5-82: Ս. Հայկունու աշխատությունների մատենագիտությունը տե՛ս նույն տեղում, էջ 78-79:

<sup>34</sup> Գորդլևսկիի В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 124.

<sup>35</sup> Տե՛ս Գորդլևսկիի В. А., Государство Сельджукидов Малой Азии, - Избранные сочинения, т. I (Исторические работы), стр. 164, տե՛ս և հմմտ. նաև

Օսմանյան իրականության ամենատարբեր կողմերով հետաքրքրվող ռուսաստանյան թուրքագետը սերտորեն շփվել է օսմանահայատակ ազգային ու կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների, բնական է, նաև արևմտահայ գործիչների հետ՝ մշտապես կարևորելով վերջիններիս բացառիկ ավանդը կայսրության մշակութային կյանքում: «Նոր օսմանական գրականության ակնարկներ»<sup>36</sup> նշանավոր աշխատության մեջ Վլադիմիր Գորդլևսկին գրում է. «Օսմանական-(իմա՝ թուրքական- Գ. Մ., Ա. Ս.) ժողովրդական սովորությունների նշանակությունը, որքան էլ դա տարօրինակ է, ավելի պարզ է Օսմանյան կայսրության «այլազգիներին»<sup>37</sup>: Ադանա քաղաքում ես հանդիպել եմ հայ - գրավաճառ Անտուանին, որը զբաղված էր (1906թ.) Թուրքիայի ազգագրական ակնարկը կազմելով: Այս միտքը նրա մոտ ծագել էր՝ ֆրանսիական գրքեր կարդալու ազդեցությամբ...»<sup>38</sup>:

Հիշարժան է Վ. Գորդլևսկու բացառիկ ջերմ անդրադարձը Օսմանյան կայսրության հայագի գրահրատարակիչներին ու գրավաճառներին, մասնավորապես Առաքելին (Թոզլյանին) և Միհրանին, ովքեր ականավոր ռուս մտավորականի վկայությամբ ավելի նվիրյալ-գրքասերներ ու «գրքի մարդ» էին, քան պարզապես գործարարներ<sup>39</sup>:

Орбели И. А., Проблема сельджукского искусства («III Международный конгресс по иранскому искусству и археологии», М.-Л., 1929), стр. 150-154:

<sup>36</sup> Очерки по новой османской литературе, Москва, 1912. արևատպված է նաև Գորդլևսկիի В. А., Избранные сочинения, т. II (Язык и литература), стр. 350-436:

<sup>37</sup> Քննարկում «инородцам»:

<sup>38</sup> Գորդլևսկիի В. А., т. II (Язык и литература), стр. 409.

<sup>39</sup> Տե՛ս Գորդլևսկիի В. А., Избранные сочинения, т. III (История и культура), стр. 165-167: Վ. Գորդլևսկին հիշում էր, որ, երբ ինքը ընդունվել է Լազարյան ինստիտուտ, ուսուցումը տարվել է թուրքական դպրոցների համար նախատեսված և Առաքել Թոզլյանի հրատարակած դասագրքերով: Տե՛ս նույն տեղում, էջ 165: Տե՛ս նաև Թուրլաճյան Բ. Ս., Հայկական տպագրությունը Օսմանյան կայսրությունում և հայերու նպաստը թուրքական

Նույնիսկ թուրքական ժողովրդական «Օրթա-օյունու» թատրոնին նվիրված իր էությունում Վ. Ա. Գորդլևսկին պարզապես չէր կարող չանդրադառնալ հայ թատերական գործիչներին՝ Վահրամ Փափազյանին, Աշըք Միմոնին, Մարտիրոս Մնակյանին<sup>40</sup>: Կարծում ենք՝ ուշագրավ է հեղինակի հետևյալ վկայությունը. «Օրթա-օյունուում դերասանները սովորաբար թուրքեր էին. հազվադեպ... ընդգրկվում էին նաև հայեր, ավելի հազվադեպ՝ հույներ: Կանացի դերերում երբեմն հանդես էին գալիս հայուհիներ, ի դեպ, նրանց միայն հանդուրժում էին... Հանդիսատեսները նախընտրում էին կանացի դերերում տեսնել տղամարդ-թուրքի...»<sup>41</sup>:

Խորհրդային թուրքագետ-պատմաբան Եվգենի Լուդշուվեյտը, ում համապատասխան խմբագրական կոլեգիայի կողմից վստահվել էր գրել Վ. Գորդլևսկու աշխատությունների ընտրանու երրորդ հատորի ներածականը, հատուկ ընդգծել է. «Լինելով թուրք ժողովրդի անկեղծ բարեկամը՝ Վ.Ա. Գորդլևսկին միաժամանակ լռությամբ չի շրջանցում Թուրքիայի

անցյալի ստվերոտ կողմերը: Մասնավորապես, նա գրում է ազգային փոքրամասնությունների ճակատագրերի մասին, և հատկապես աշխատասեր ու բացառիկ օժտված հայ ժողովրդի մասին, որը խաղացել է այդքան կարևոր դեր Օսմանյան կայսրության տնտեսական ու մշակութային կյանքում... Գիտնականը, վերստեղծելով Հայաստանի անցյալի պատկերները... խորին հարգանքով է խոսում նրա հին մշակույթի և մարդկության պատմության մեջ հայ ժողովրդի նշանակության մասին...»<sup>42</sup>:

Կարծում ենք՝ հիշարժան են ականավոր ռուս թուրքագետի բացառիկ ջերմ տողերը Մկրտիչ Խրիմյանի մասին՝ Վանին նվիրված էությունում<sup>43</sup>: Վ. Գորդլևսկին ռուս ընթերցողին պատմում է Վանում տպագրվող «Արծվի Վասպուրական» պարբերականի, Վարազավանքի, հետագայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի (1820-1907թթ.) ազգանվեր գործունեության տարբեր ոլորտների մասին՝ բացատրելով նաև, թե ինչու էին շնորհակալ հայերը նրան «Հայրիկ» պատվանվամբ մեծարում... Ռուս արևելագետը չի մոռանում նաև հիշեցնել, որ արդեն կաթողիկոս օժված Մկրտիչ Ա Խրիմյանը «կարողանում էր մեծ տակտ ցուցաբերել մուսուլմանների նկատմամբ, ինչ վկայում էր վիրթուսարի ներքին կուլտուրայի մասին»<sup>44</sup>:

տպագրական արվեստին, Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդներ, XII, Թուրքիա, Երևան, 1985, էջ 98-114:

<sup>40</sup> Տե՛ս Գորդլևսկիի В. А., *Избранные сочинения*, т. III (История и культура), стр. 52, 56. Հիշարժան են Հրայր Աճառյանի հետևյալ տողերը. «Օսմանցոց մեջ առաջին անգամ թատրոն մտցնողները հայերն էղան, մինչև այն ժամանակ նրանք հեյալ (ombre chinoise) միայն գիտեին (Հաջի Էյվաթի և Քարապոզի խաղերը): Վարդովյանը, Բենգյանը, Ռշտունին, Չափրաստյանը, Տասուլջյանը և Մնակյանը հիմնեցին Պոլսում Գետիզ-փաշայի Վեզնեջիլերի և Քադիքոյի օսմանյան թատրոնները: Դերասանները՝ գլխավորապես, իսկ դերասանուհիները՝ բացառապես հայ էին էղել, որովհետև թուրք կինը բեմ բարձրանալու իրավունք չուներ «Նամեհրամի» պատճառով...» Աճառյան Լ., Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ (խմբ.՝ Պ. Մ. Մուրադյան), Երևան, 1999, էջ 19-20: Տե՛ս նաև Ստեփանյան Լ., Հայերի դերը Օսմանյան կայսրության մշակութային կյանքում. - Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ (խմբ.՝ Ռ. Սաֆրաստյան), հ. 6, Երևան, 2009, էջ 240-244:

<sup>41</sup> Գորդլևսկիի В. А., *Избранные сочинения*, т. III (История и культура), стр. 56.

<sup>42</sup> Лудшувейт Е., Вступительная статья, - В. А. Гордлевский, *Избранные сочинения*, т. III (История и культура), стр. 5.

<sup>43</sup> Առաջին անգամ տպագրվել է «Վանի պատմությունից» վերնագրով (Из истории Вана, - «Русские ведомости», Москва, 1915, N 111), արտատպվել է «Известия Кавказского отделения Русского географического общества» (т. XXII, вып. 2, Тифлис, 1915, стр. 234-238), վերամշակվել և հրատարակվել է նաև Գորդլևսկիի В. А., *Избранные сочинения*, т. III (История и культура), стр. 133-134: Մանրամասն տե՛ս Կոստանյան Է., Մկրտիչ Խրիմյան. Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000:

<sup>44</sup> Տե՛ս Գորդլևսկիի В. А., *Избранные сочинения*, т. III (История и культура), стр. 134:

«Հայկական թեմատիկային» անդրադառնալիս տասնամյակների ընթացքում անսասան մնաց Վլադիմիր Գորդլևսկու հավատամքը. «Հայերը հնագույն մշակույթ ունեցող ժողովուրդ են, բայց անհիշելի ժամանակներից նրանց ծաղկուն երկիրը ենթարկվել է նվաճողների մշտական ասպատակությունների, որոնք ավերել են այն...»<sup>45</sup>:

Հիրավի, Վ. Ա. Գորդլևսկու՝ վկայության արժեք ստացող բազմաթիվ աշխատություններում կենդանի հառնում են տեսարանները մի աշխարհի, որը պարզապես հնարավոր չէ պատկերացնել առանց հայկական ներկայության. և չնայած պետական-արտաքին քաղաքականությամբ ու տիրապետող գաղափարախոսությամբ պարտադրված կաղապարներին՝ ականավոր օսմանագետը և թյուրքագետը երբևէ չէր էլ վարանում օգտագործել այդ աշխարհի իրական՝ «Հայաստան» («Արևմտյան Հայաստան»), «Հայկական լեռնաշխարհ» անվանումները՝ ի տարբերություն իր ստեղծած գիտական դպրոցը ներկայացնելուն հավակնող որոշ մերօրյա «հեղինակությունների»:

<sup>45</sup> Гордлевский В. А., Там, где в старину жили армяне. - Избранные сочинения, т. III (История и культура), стр. 123. Հեղինակը սույն հոդվածի ձևագրում հորդորել է ծանոթանալ նաև հետևյալ հրատարակություններին. «Братская помощь пострадавшим в Турции армянам», Москва, 1898; Х. Ф. В. Линч, Армения, т. II, гл. IV, IX, Тифлис, 1910: Ե. Լուղշուվեյտը, անդրադառնալով Վ. Գորդլևսկու՝ «այն ժամանակ գլխավորապես հայերով կամ հույներով բնակեցված քաղաքները» նկարագրող էտյուդներին (Վան, Կարին-Էրզրում, Տրապիզոն, Խլաթ-Ախլաթ), ականհայտ զգուշավորությամբ ընդգծում է, որ այդ աշխատանքները չափազանց հետաքրքիր են, «քանզի այժմ էլ պահպանել են իրենց թարմությունը և ճանաչողական նշանակությունը... Նրանք կարող են դասվել պատմական աշխարհագրության ստեղծագործությունների շարքը: Лудшувейт Е., Вступительная статья, - В. А. Гордлевский, Избранные сочинения, т. III (История и культура), стр. 5.

## АКАДЕМИК В. А. ГОРДЛЕВСКИЙ – О ПРОБЛЕМАХ АРМЕНИСТИКИ

*Гурген Меликян, Александр Сафарян*  
(резюме)

В публикациях и рукописях разных лет В. А. Гордлевского (1876-1956) – основоположника московской школы османистики и тюркологии, освещены проблемы национальных и религиозных меньшинств Османский империи и Турецкой Республики. В данной статье анализируются представляющие большую ценность для арменистики следующие работы крупнейшего представителя российского востоковедения: «Там, где в старину жили армяне», «Армяне и война» («Из жизни армян в Турции»), «Эрзурум», «Ван» («Из истории Вана»), «Очерки по новой османской литературе», «Происхождение османского слова «узан»», «Через книгу к человеку», «Ортаойну», «Государство Сельджукидов Малой Азии».